ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 575-Ա «25» սեպտեմբերի 2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՔԻ ԱԼ. ՓԱՓԱԽՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍՈՒՐԵՆ ՔԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒԺԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Գևորգ Գևորգյանի 2026 թվականի սեպտեմբերի 18-ի Ն/3538-2026 զեկուցագիրը, ինչպես նաև Սուրեն Քալոյանի գրավոր բացատրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այրքի Ալ. Փափախչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սուրեն Քալոյանի նկատմամբ՝ աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու համար, այն է՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչությունում իրականացվող թիվ 62317226 վարույթի շրջանակներում արձանագրված պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքով պայմանավորված՝ կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

25.09.2026

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ